ՀՀ Գլխավոր Դատախազ

պարոն. Գ.Կոստանյանին

մեղադրյալ Ա.Գալստյանից

բ.գ. 83159711

04.07.16թ

Դիմում-բողոք

Հարգելի պարոն Կոստանյան, 2015 թվականի դեկտեմբերի 23-ին, իմ նկատմամբ անհիմն և ապօրինի մեղադրանք է առաջադրվել, խարդախություն կատարելու համար: Հիմա ուզում եմ հայտնել Ձեզ, թե ով է խարդախ՝ ես,թե քննչական կոմիտեյի ղեկավարությունը, քննիչներ Ա.Գրիգորյան (բաժի պետ), Ա.Մկրտչյան (բաժնի պետի տեղակալ,2014 թ. քննչական խմբի ղեկավար), Բ. Ադամյան ՀԿԳ քննիչ(2015 թ. քննչական խմբի ղեկավար), նրա բարեկամ և իմ փաստաբան Հ. Ավետյան: Սրանք կազմակերպված հանցագործների խումբ են,որոնք 2014 թվականի հունիսից ինձ պահում են շանտաժի և սիստեմեկման մթնոլորտում՝Կարեն Հովհաննիսյանի և Վ. Մանգասարյանի ակնհայտ սուտ ցուցմունքների հիման վրա:

2014 թ. Ա.Գրիգորյանը և Ա.Մկրտչյանը, մեղադրյալ Վ. Մանգասարյանի հետ միասին խարդախ սխեմա են գծել: Վ. Մանգասարյանը իր ծանոթ Կ. Հովհաննիսյանի(գործի մեջ մանրամասն ներկայացված) հետ, ակնհայտ սուտ ցուցմունքներ հորինելով, ինձ կանչում են քննչական վարչություն և սկսում իրենց սև գործը՝ ենթարկելով ինձ շանտաժի իմ երեխաներով: 2014թ. սեպտեմբերի 10-ին կազմակերպված հանցագործ խումբը հասավ իր զրպարտության և խարդախության գագաթնակետին,կազմակերպելով առերես հարցաքննություն՝ խարդախ Կարեն Հովհաննիսյանի հետ, որտեղ վերջինս իրականությանը չհամապատասխանող ցուցմունք տվեց, իբր ինքն անձամբ ներկա է եղել և տեսել է, թե ինչպես է Լևոն Սեդրակյանը 2008թ. սեպտեմբերի 25-ին տղային տալիս 50.000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլար, և հետո(2008թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին) նվս ԱՄՆ-ից Լևոնը ուղարկել է 100.000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար, և որ ինքը նոր հասկացավ, որ խարդախը Կառլենն է (այդ բոլորը մանրամասն նշված է քրեական գործում):

2014թ. սեպտեմբերի 10-ին, ցուցմունք տալու օրը, Ա. Գրիգորյանը և Ա. Մկրտչյանը դուրս են հանում իմ փաստաբան կոչվածին՝ Հ. Ավետյանին և երկուսով շատ լկտի ձևով սկսում են շանտաժի ենթարկել , ասելով, որ ինձ և տղային կկալանավորեն , որ իրենց դեմը խաղ չկա և նրանք ինչ ուզեն այդպես կանեն, և Գրիգորյանը անձամբ ինձանից պահանջեց կոնկրետ գումար, որ տղային և ինձ չկալանավորեն: Ես ասացի, որ չունեմ այդքան գումար, իմ ունեցածը իմ հայրական տան վաճառքից ստացված գումարն է, և դա այն ամենն է ինչ ես ունեմ և ուրիշ բան չեմ կարող մտածել:Նրանք սպառնացին,որ լավ մտածեմ և շատ արագ՝ երկու օրվա մեջ պատասխանեմ, այլապես նրանք կկալանավորեն տղային:

2014թ.-ի սեպտեմբերի 12-ին ես զանգեցի Արա Մկրտչյանին և ասացի, որ ուզում եմ հանդիպել: Նա ասաց,որ ինքն կզանգի և կասի ուր գնամ:Հետո նա զանգահարեց և հայտնեց ինձ իրենց տան հասցեն և ասաց որ մոտենում իրենց տուն: 2014թ. ի սեպտեմբերի 12 ին, ժամը 16:40 ին, ես գնացի նրա տուն (հասցեն 2րդ Նորքի զանգված, Մոլդովական 50/4 բն. 27),

որտեղ հանձնեցի գումարը, ինչքան ունեի , որ ստացել էի ծնողներիս տան վաճառքից: Ա. Մկրտչյանին նաև զգուշացրեցի, որ իմ ընտանիքի հետ գործ չունենան և ինձ այլևս շանտաժի չենթարկեն: Նա ասաց, որ չանհանգստանամ, որ ամեն ինչ լավ կլինի, ուղղակի պետք է արվեն երկու գործողություններ և վերջ: Ես, իրենց տան մեջ նաև զգուշացրեցի, որ խարդախ Կ. Հովհաննիսյանի հեռախոսի մեջ կա իմ գրված ստացականը, որի մասին ես հայտնել եմ իմ ցուցմունքներում և նա ասաց, որ դա պրոբլեմ չի(մանրամասները ք.գ.-ի մեջ կան):

2014թ. հոկտեմբերի 3-ից մինչև 2015թ. դեկտեմբերի 23-ը՝ ուղիղ մեկ տարի և երեք ամիս,իրենց հանցավոր անգործության պատճառով, ինձ ոչ մի անգամ չեն կանչել և ոչ մի քննչական գործողություններ չեն կատարել, գոնե ճշմարտությունը պարզելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար, ուղղակի պետք է լավ ծանոթանային 30 հատոր քննական գործերի քննությանը, որը բարեխիղջ կատարել էր ՊԵԿ-ի քննչականը և որ իրենք փաստացի այդ քննությունը օգտագործել են իրենց շահերի համար, այլ ոչ թե մեղավորներին պատժելու համար, որը ակնհայտ երևում է իրենց կատարած քննության 20 հատորների մեջ:

2015թ. դեկտեմբերի 15-ին աղջիկս տունը գրավադրել է և 35.000 ԱՄՆ դոլար ստացել, որ ես գնամ ԱՄՆ բուժման: Գումարը ստացել ենք դեկտեմբերի 16-ին և նույն օրը ինքնաթիռի տոմս գնել դեկտեմբերի 26-ի համար:

Բայց դու մի ասա , որ խարդախների ռիմակը քնած չի և բավարարված չի իրենց կատարած շորթումով և նրանք դեկտեմբերի 18-ին շատ արագ տեմպերով կանչում են իրենց սուտասան, խարդախ գործակալ Կարեն Հովհաննիսյանին և նույն ցուցմունքը վերցնում չորրորդ անգամ, ավելացնելով այն, որ ինքն կոնտուզիա չի ստացել և ոչ մի պրոբլեմ չունի հիշողության հետ կապված, նաև 2008թ. օգոստոսի 6-ի ստացականի պատճեն,որը իրենից առ ոչինչ է ներկայացնում(ք. գ.-ում մանրամասն գրել եմ),լիազորագրի շինցու պատճեններ՝խարդախ ու տարբեր անհասկանալի ստորագրություններով, որոնք քննիչ Ադամյանը դրել է մեղադրանքի հիմքում,և իր գրած մեղադրականը, որում ոչինչ չի համապատասխանում քրեական գործում եղած փաստերին և փաստաթղթերին,որից գլուխ չեն կարողանում հանել Հայաստանի Հանրապետության մի շարք առաջատար իրավաբաններ:Բ. Ադամյանը և իր ղեկավարությունը շփոթում են իրավաբանությունը խարդախության հետ որը կատարել են իրենց քննության ընթացքում տարբեր մարդկանց նկատմամբ:

Դեկտեմբերի 21-ի երեկոյան զանգահարում են ինձ և ասում, որպեսզի ամսի 23-ին ներկայանամ քննչական վարչություն:Դեկտեմբերի 22-ին ոստիկանությունը ինձ հանձնում է ծանուցագիր, որում նույնպես գրված է, որպեսզի ես ներկայանամ քննչական մարմին և պետք է ներկայանամ, որպես վկա, հարցաքննվելու համար: Նույն օրը ես զանգարում եմ փաստաբան Հրանտ Ավետյանին (որին 2014 թ-ին վճարել եմ 2000 ԱՄՆ դոլար, և չեմ ստացել ոչ մի պայմանագիր,և չեմ ստացել առ այսօր) և նա ինձ հայտնում է , որ ինքը գիտի ամեն ինչի մասին,և որ ինձ ուզում են կալանավորեն, բայց ասում է,որ վաղը կգնանք և ինքը մի բան կանի, կպայմանավորվի,քանի որ քննիչը իր բարեկամն է:

Դեկտեմբերի 23-ի առավոտյան ես իմ ծանոթի միջոցով մտա Աղվան Հովսեփյանի մոտ և մանրամասն բացատրվեցի՝ասելով, որ ես ոչ մի հանցագործություն չեմ արել , ինքն ինձ լավ ճանաչում է, ն[illegible]արդեն հոգնել եմ այդ բոլոր գրոլարտանքներից, ես պետք է գնամ բուժման

դեկտեմբերի 26-ին, որի համար նախորոք շատ դժվարությամբ պայմանավորվել եմ,և որ այդ ամենը կապված է մեծ գումարների հետ, և ես այլևս չեմ կարող նորից տոմս գնել և նորից պայմանավորվածություն նշանակել՝կապված իմ բուժման հետ և որ իմ բոլոր պայմանավորվածությունները հողս կցնդեն :Նա ինձ ասաց, որ գնամ քննիչի մոտ: Փաստաբանի հետ մտա քննիչ Բ. Ադամյանի մոտ, քննիչը 5 րոպեյով դուրս եկավ աշխատասենյակից, ապա վերադարձավ, մի քանի րոպե ինչ-որ թղթեր տպելուց հետո ասաց, որ ինձ մեղադրանք է առաջադրել ու առանց բացատրության ասաց, որ ես ստորագրեմ: Այդ ժամանակ սկսվեց մի բեմականացվաց տեսարան փաստաբանի և քննիչի միջև: Ինձ դուրս հրավիրեցին և շարունակեցին հայհոյանքներով իրենց թատրոնը, հետո ինձ ներս հրավիրեցին,դեմ տվեցին ինչ որ ստորագրելու փաստաթղթեր, ես ոչ մի բան չհասկացա, թե այդ պահին ինչ կատարվեց: Ես փաստաբանի հետ դուրս եկա, նա ինձ հայտնեց, որ քննիչն ինձ ուզում էր կալանավորել և ինքն հազիվ փրկեց կալանավորումից, և որ ես պետք է շնորհակալություն հայտնեմ քննիչին, և տամ ՝՝փրկագին՝՝: Ուրիշ ելք չունենալով և գտնվելով ցեյտոտի մեջ և չհասկանալով, թե ինչ է կատարվում, քանի որ Աղվան Հովսեփյանի խոսքը և իրենց կատարած գործողությունները իրարամերժ էին և անհասկանալի, այդ իսկ պատճառով ես համաձայնվեցի վճարել իրենց ուզած շորթման գինը , նաև մի քանի հազար դոլար պետք է տամ փաստաբանին՝ ըստ գործի ընթացքի, որ նա իմ շահերը պաշտպանի:

2016թ. հունվարի 16ին ես դիմեցի ՀՀ նախագահ մեծարգո պարոն Ս. Սարգսյանին, հանձնելով տեղեկանք, թե ինձ անհիմն և ապօրինի մեղադրանքներ են ներկայացրել՝ չունենալով բոլոր հիմքերը և փաստաթղթերը, թե ինչի հիման վրա են ինձ մեղադրանք առաջադրել,որովհետև քննիչը մեկ ամսից ավելի հետո նոր տրամադրեց քրեական գործի պատճենները և սկավառակը: Նախագահի կողմից տեղեկանքը ուղարկվել էր քննչական կոմիտե, որի հիման վրա ինձ 29.01.2016թ. կանչեցին Ք.Կ անհասկանալի քննարկման (որի մասին մանրամասն գրել եմ և տեղյակ եմ պահել վերահսկող դատախազ պ-ն Պողոսյանին):Քննարկումից առաջ Վահագ Հարությունյանը, Բ. Ադամյանը և փաստաբան Հ. Ավետյանը երրորդ անհասկանալի շոուն կազմակերպեցին:Դրանից հետո ես, Վահագ Հարությունյանը և Բագրատ Ադամյանը մտանք Աղվան Հովսեփյանի մոտ(մանրամասները ներկայացրել եմ Վ. Պողոսյանին): Աղվան Հովսեփյանը շատ զարմացավ, որ իր ղեկավարած կառույցում 1 տարի 3 ամիս ոչ մի քննչական գործողություն չեն կատարել, բազմակողմանի և արդար քննության հետ կապված, այլ հիմնվել են ինչ-որ մարդկանց խոսքերի վրա և հանձնարարեց, որ գործը վերսկսեն և իրեն զեկուցեն: 2016թ-ի փետրվարի 11-ին, քննիչի կողմից ստացել եմ որոշում, որ գործը վերսկսել են: Եվ այդ օրվանից սկսվեց, Բ. Ադամյանի և իր բարեկամ Հ. Ավետյանի խարդախության, ժամավաճառության և խաբեբայության նոր փուլ, որը ցավոք հասկացա մարտի 24-ին, իրենց հետ զրույցի ժամանակ: Պարոն քննիչը իր բարեկամ՝ իմ փաստաբան Հ. Ավետյանի հետ մեծ խաղեր են սկսել, երևի դուրները եկել էր 2014 թ-ի սեպտեմբերի 12-ի և 2015թ-ի դեկտեմբերի 23-ի շորթումները,որ իմ երեխաներին առանց տուն էին թողել: Իմիջիայլոց 2015թ. դեկտեմբերի 23-ին երբ քննչական կոմիտեի մոտ տեսա Արա Մկրտչյանին, նրան ասացի, որ ինքն ու իր պետ Ա. Գրիգորյանը արդյոք հոգեկան հիվանդ չեն, նա ասաց, որ իրենից գործը վերցրել են, նա ոչինչ չի կարող անել և արագ մտավ շենք: Ես հասկացա որ գործ ունեմ հասարակ,անզգաստ խարդախների հետ, որոնք ունեն լավ հովանավորներ ու շատ ճիշտ են ասում,որ իրենց դեմը խաղ չկա , ես դրա՝ [illegible] հանձնվում եմ վեց ու կես ամիս ամեն օր շփվելով Բ. Ադամյանի և նրա բարեկամ Հ.

Ավետյանի հետ, որոնք զբաղված են ստախոսությամբ, ժամավաճառությամբ, խարդախությամբ և ամեն առիթ օգտագործում են փող շորթելու համար:

Բ. Ադամյանը յոթ ամիս շարունակ, ինչ որ պատճառաբանություններ է գտնում, իբր հարցումներ է կատարում,որը պետք է անեին 2 տարի առաջ իմ ցուցմունքների հիման վրա, որ դատախազությունն է ձգձգում, իրենք պետք է որոշեն :Իրենց հանցավոր անգործության պատճառով՝ ես մոտ յոթ ամիս է զրկված եմ բուժման իրավունքից և ֆինանսական մեծ կորուստներ պատճառելուց հետո էլ չեն ուզում հասկանալ, որ ես էլ փող չունեմ: Փաստաբան Հ. Ավետյանը ոչ մի գործ չի անում, այլ անդադար փող է շորթում, պայմանագիր է տալիս ստորագրելու, որում գրված է 150.000 դրամ, այնինչ ես նրան տվել եմ մի քանի հազար ԱՄՆ դոլար, և երբ պահանջեցի գումարին համապատասխան պայմանագիր, նա պատասխանեց. << Չեմ տալիս,գնա որտեղ ուզում ես բողոքի>>, իսկ իմ այն ասածին, թե նա և իր բարեկամ Բ. Ադամյանը խափելով գումար են շորթել պատասխանեց . <<Լավ ենք արել>>:

Բ. Ադամյանին ասում եմ, 2014թ-ից ինչ պահանջել եք արել եմ, նա ինձ ձեռք առնելով ասում է, համբերի ղեկավարության որոշում է, գնալու եմ ԱՄՆ Լևոնին հարցաքննեմ գամ,կամ էլ Լևոնը պետք է գա Երևան,որ հարցաքննեմ, Սնադային եմ ման գալիս, նրան ասում եմ , Սնադային ման ես գալիս , որ գա ասի, որ տեսել է, թէ ինչպես է Լևոնը 2008թ-ի սեպտեմբերի 25-ին տղայիս 50.000 ԱՄՆ դոլար տալիս, նա ինձ ձեռք առնելով պատասխանում է .<< ցուցմունքները կտա, կկարդամ, նոր կվորոշեմ>>: Ասում է, որ Բլուր թաղամասում բանկն եմ ման գալիս,տունը գտել եմ, դուռը փակա, տան տիրոջը կաղաստրով ման եմ գալիս: Երևի քննիչ կոչված Բագրատը շփոթել է անօրինական փողերի շրջանառությունը բանկային համակարգի հետ: Մեկ ամիս է, ասում է, որ Լևոնը նամակ է գրել, հիմա էլ փողը վերցրել է ալավերդյանցի ՞՞սպորցմեն՞՞ Կարոյից, 50.000 ԱՄՆ դոլար և տվել է Կառլենին, և ուղիղ մեկ ամիս է հանձնարարություն է իջեցրել Երևանի կենտրոնական ոստիկանության բաժնին,որ գտնեն Կարոյին: Իսկ իմ այն հարցին,թե ինչու չեն գտնում, ուշադրություն նրա պատասխանը << ազգանուն, հայրանուն, հասցե չունենք, եթե կարող ես, դու իմ ընկերն ես, դու գտի>>: Եվ խարդախների կուլմինացիան, որոնց մոտ զուրկ են թե բարոյականությունը, թե մարդկայնությունը և թե հասկացողությունը, էլ չեմ խոսում իրավաբանության մասին, որից նրանք շատ հեռու են, 2016թ. հունիսի 13-ին առավոտյան ինձ աներեսի նման զանգահարում է փաստաբան Հ. Ավետյանը,որովհետև դրանից առաջ չէր պատասխանում իմ հեռախոսազանգերին, և ասում է, որ իր բարեկամ՝ քննիչ Բ. Ադամյանը, գտել է Մոսոյին ու ուզում է, որ առերեսում հարցաքննություն կազմակերպվի, որ ժամը 13:00-ին պետք է լինենք քննչական կոմիտեում: Ես նրան ասացի, որ ուղիղ մեկ ամիս է, ուզում եմ քեզանից ու քո բարեկամից, որ գնամ ցուցմունք տամ սև գրքերի հետ կապված և քո ծառայություններից հրաժարվեմ և ուզում եմ, որ ինձ՝ ըստ օրենքի հանրային պաշտպան տրամադրեն ,Ադամյանը ասում է, որ ըստ օրենքի պետք է փաստաբանիդ հետ գաս, գրես, որ հրաժարվում ես, ես էլ քննարկեմ և որոշեմ: Բայց դուք մեկ ամիս է զբաղված եք խաբեբայությամբ, բայց միևնույն է ես կգամ, ժամը 13:00-ին այնտեղ կլինեմ: Ես գնացել եմ միայն մի բանի համար, որ մի անգամ ևս ապացուցեմ և Բ. Ադամյանի և Հ. Ավետյանի խարդախ դիմակը և նրանց ուղղորդված ՞՞թատրոն՞՞ հանցաքննությունը բացահայտեմ և ներկայացնեմ: Ուղիղ 13:00-ին ես քննիչ Բ. Ադամյանի սենյակում էի: Ներս են հրավիրում խարդախ, մեքենայի դալալ, խաբեբա Մոսոյին, որ 2012 թ-ին փախուստի մեջ էր Հայաստանից՝ խարդախություններ կատարելու համար,և Հայաստանում հայտնի է որպես դալալ և խարդախ ,իսկ Բ.Ադամյանի համար որպես

´´Մովսես ջան´´ , Ա. Գրիգորյանի և Բ. Ադամյանի կողմից լավ պարապած, նախորդ ցուցմունքներին լավ ծանոթացած(մանրամասները ներկայացրել եմ վերահսկող դատախազ Վ. Պողոսյանին, առերեսման ձայնագրության հետ միասին):

Բ. Ադամյանը, Արա Մկրտչյանը և մյուս քննիչները՝ իրենց խարդախ բաժնի պետ Ա. Գրիգորյանի ղեկավարությամբ,որը անմիջական մասնակիցն էր 2014 թ.-ի սեպտեմբերի 12-ի, և լավ քաջատեղյակ էր 2015թ. Դեկտեմբերի 23-ի կազմակերպած շորթումներից ,բոլոր ցուցմունքները վերցրել են ուղղորդումով՝ ինչպես իրենց է հարմար:

Պարոն Կոստանյան միգուցե ժամանակն է, որ այդ հոգեկան հիվանդների կատարած ´´աշխատանքին´´ գնահատական տրվի, թե պետք է թողնել որ նրանք շարունակեն իրենց հանցագործ տակտիկան, միլիոնավոր դոլարների վնաս տան պետությանը, մարդկանց, որոնք սխալվել են բարև տալով Վլադին,Ղևոնդին,Էդմոնին, որոնք խաբելով մարդկանց զրկել են իրենց ունեցվածքից՝ իհարկե քննչական կոմիտեի օգնությամբ:

Քննչական կոմիտեի 3 տարվա արած գործը, որը երևում է 20 հատորների մեջ՝ արգելանք դնել ,հետո մարդկանց շանտաժի ենթարկել իրենց գործակալների(Կ. Հովհաննիսյան, Վ. Մանգասարյան,Է. Խուդյան, և այլն) միջոցով, փողեր շորթել և արգելանքները հանել. Մարդիկ որոնք շատ հանգիստ ասում են որ մեկ և ավելի միլիոն դոլարներ են տվել (Ղալումյաններ, Ա. Վարսանյան(Մացակյաններ), Ռ. Հարությունյան,Կարեն Գևորգորյան և այլն) մի հատ հարց չեն տալիս , թե որտեղից այդ փողը, որևէ փաստաթուղթ չեն պահանջում(փողերի ծագում, փախանցում), դրա փոխարեն քննիչ Բ. Ադամյանը հայտնում է, որ Վարսանյանը ասում է <<դե ընկերն է տվել մեկ միլիոն դոլար Մոսկվայից>>: Իսկ երբ ասում ես , որ դա ընկեր չի տվել, այլ Պաշտպանության Նախարարությունից գողացված փողեր են, Ա.Վարսանյանը տասնյակ տարիներ մասնակցում է ՊՆ վառելաքսուկային ապրանքների տենդեռներին, այլ երկրներում գրանցված կազմակերպություններով և մեկին մեկ ավելացված արժեքով ապրանքներ են վաճառում ՊՆ-ին , որ ասում ես քննիչ կոչեցյալին,որ պետությունից և մարդկանցից գողացվաց փողերը Մանգասարյանը և Վարսանյանը տարել են Քոչար-Վաղարշյան փողոցների վրա շենք կառուցել, նա շատ ´´խելոք´´ հայացքով նայում է ու պատասխանում է որ գործերը ուղարկել է դատախազություն, կծանոթանան ու կվերադարձնեն ,ասում է ինձ արի ցուցմունք տուր, իբր ինքը չգիտի(որի մասին մանրամասն կա ՊԵԿ-ի քննչականի կողմից արված 30 հատորների մեջ, իսկ իրենց արված քննության արդյունքում պարզ երևում է, թե ինչպես են ուղղորդված ցուցմունքներ վերցնում(Ղալումյան,Վարսանյան(Մացակյան),Է. Խուդյան և այլն) և գումարներ շորթում): Ուզում եմ հարց տալ քննչական կոմիտեի ղեկավարությանը՝ իսկ ավելի լավ չեր լինի իրականում գործով զբաղվեին երեք տարի , այլ ոչ հանցավոր անգործությամբ և մարդկանց ու պետության շահերը պաշտպանեին ինչի համար իրենք կոչված են, աշխատավարձ են ստանում պետությունից , բայց դրա փոխարեն ավելի հեշտ ճանապարհ են գտել հարստանալու՝ շանտաժով, խարդախությամբ, խաբեությամբ, ուրիշի տները և փողերը խլելով, ուրիշի երեխաների հաշվին իրենց երեխաներին բարեկեցիկ կյանք ապահովվելով, չգիտակցելով որ իրենք և իրենց երեխաները Աստծո կողմից անիծված կլինեն մինչև իրենց կյանքի վերջը: Եվ այդ մեկ միլիոնից ավել վերցրած կաշառքները իրենց չի օգնի, որովհետև Աստված՝ ի տարբերություն իրենց, փող չի վերցնում:Փողերը վերցնելու և իրական խարդախներին պատասխանատվության ենթարկելու և պետության ու մարդկանց պատճառած վնասները վերականգնելու փոխարեն, նրանք շուտ-շուտ իրենց հարցերն են

լուծում և իրենց հիմարի տեղ են դնում ու գործ հարուցում մի մարդու դեմ, որ հիսուն հատոր քրեական գործում ունի բոլոր ապացույցները՝ փաստաթղթերով հիմնավորված, այլ ոչ բացահայտ սուտ, առանց ոչ մի փաստաթղթի, միայն գյուլնազ տատի հեքիաթների վրա հիմնված խարդախների ցուցմունքներով(Վլադ Մանգասարյան, Էդուարդ Մանգասարյան, Հայկազ Սարգսյան,որոնք իրենց հանցավոր խարդախություններով միայն ինձանից հափշտակել են 140.000 ԱՄՆ դոլլար) , Վ. Պետրոսյան,Ղ.Ղալումյան՝ բուրգի ստեղծողը, որը անմիջական մասնակցություն է ունեցել պետության և մարդկանց թալանին,բայց իր ասելով տալով գումար, դարձել է ազնիվ մարդ, Ա.Վարսանյան (Մացակյանների խումբ),Վ.Մանգասարյան ,խարդախ, ստախոս, տականք Է.Խուդյան՝ ով թալանել է Հայաստանից միլիոնավոր դոլլարներ՝ ներդնողի անվան տակ և այլն:

Այս բոլորը ես չեմ հորինում, այլ խարդախ քննիչները իրենց ձեռքով են գրել և հաստատել իրենց հանցավոր գործողությունները, որ հիմա ևս շարունակում են նույն տեմպով: Քննիչ Բ.Ադամյանը իր բարեկամ Հ. Ավետյանի հետ զբաղված են թալանով և ձեռք են առնում ինձ, որի իրավունքը երևի ես եմ տվել : Բոլոր ասածներիս ապացույցները կան, նաև որոշ փաստեր ներկայացրել եմ վերահսկող դատախազ Վ. Պողոսյանին, բայց ոչ մի արձագանք չեմ ստացել: Ուղղակի խնդրում եմ Ձեզ ,այս ամենին գնահատական տալ, որովհետև այդ հանցավոր խարդախների խմբի պատճառով, բացի նրանից, որ կորցրել եմ ողջ ունեցվածքս, երեխաներս մնացել են առանց տուն, անունս և արժանապատվությունս ոտնահարվել են, ես նաև շատ լուրջ առողջական խնդիրներ ունեմ, որոնք չեմ կարող լուծել այդ տականքների պատճառով: Եվ խնդրում եմ Ձեր ցուցումը՝իմ նկատմամբ ապօրինի և անհիմն առաջադրված մեղադրանքի որոշումը վերացնելու համար ,և իմ անձի հանդեպ ակնհայտ սուտ ցուցմունքներ և ապօրինի գործողություններ կատարողներին ենթարկել պատասխանատվության :

Ա. Գալստյան